նայն երկիր չափեցին, ոչ ասացին զ՝Ովկիանոս[1] շուրջ լինել, այլ ի մի կողմանէ անկեան[2] հիւսիսա[յ]ին յարեւմտից, եւ ընդ հիւսիսի յարեւելս կոյս տարածել յերից[3] մասանց [3բ] *մասն մի. եւ ընդ արեւմուտս ի հարաւ կոյս՝ ի չորից մասանց յերիս մասունս. եւ ի նմանէ սկսեալ զԱնծանաւթ երկրէ ասէ շրջապատեալ զբնակութիւն մարդկան. եւ զերից ծովուցն՝ զՀնդկացն եւ զՅունացն եւ զԿասբիցն, որ է Վրկանի, բնակութիւն մարդկան ասէ լինել շուրջ զնոքաւք. եւ ճշմարիտ է:* 31 *[4]Քանզի զՅունականաւն եւ զԿասբիցն եւ ի մէնջ մարդիկ շուրջ անցին. նոյնպէս վարկանիմ եւ զՀնդկա[յ]ինն:* 32 *Եւ ո՛չ որպէս արտաքինքն՝ Դիոնէսիոս[5] եւ Ապողոն եւ ընկերք իւրեանց ասեն՝ պարունակել Ովկիանոսի զամենայն:* 33 *Որում եւ Կոստանդիանոս[6] Անտիոքացի հանդիպի վիճել [ընդ] ընկերս[7] իւր յԱստուածային Գրոց, յորմէ ոչ տեսաք հատումն ինչ բան բանի պատասխանելով. զի երկոքին գտանին յԱստուածա[յ]ին Գիրս՝ եզաբար եւ յոգնաբար ասացեալ.* Ժողովեա[ց]ին[8] ջուրքդ ի ժողով մի. եւ ի ժողովս իւրեանց[a], *եւ թէ՝* Զժողովս ջուրցն կոչեաց ծովս[b]:

34 *[9]Իսկ յաղագս երկրի բնակելո[յ] մարդկան՝ երկայնութեամբ յարեւելից յարեւմուտս, վասն բարեխառնութեան[10]. եւ ի հարաւո[յ] եւ ի հիւսիսո[յ]՝ անբնակ լինել, վասն սաստիկ ջերմոյ եւ սառնամանեաց:* 35 *Նոյնպէս վիճել յԱստուածային Գրոց բան առ բան պատասխանի՝ այսպիսի ինչ ասէ Աստուած ցՅոբ, թէ՝* [4ա] Խելամո՞ւտ իցես լայնութեան առ ի ներքո[յ] երկնից, որչա՞փ իցէ[11]. զի՞նչ երկիր իցէ՝ յորում լոյսն ագանիցի[c]: 36 *Իբրեւ տարակուսեալ զնա, յաղագս հարաւո[յ] անբնակին եւ հիւսիսո[յ] լերանց ձմեռնացելոցն, ընդ որովք թագել[12] կարծեմ զԱրեգակն: Քանզի յառաջագոյն Սոփա՛ռա[յ] Մինեց[ւ]ոյ[13] ասացեալ էր, թէ՝ «Երկայն է չափ երկրի»՝ որպէս զգիտակ բնակութեան մարդկան[d]:* 37 *Իսկ[14] ընդդէմ այդոցիկ պատասխանեցին յԵսա[յ]եայ, թէ՝* Հաստատեաց զերկիր բնակիլ[15] ի նմա[e]. *եւ դարձեալ, թէ՝* Ոչ ի զուր ինչ արար զնա, այլ ի բնակութիւն ստեղծ զնա[16f]:

38 *Իսկ ընդդէմ դոցա պատասխանի Դաւթ՝ա[յ][17], թէ՝* Զաշխարհ լրիւ իւրով դու հաստատեցեր, զհիւսիս եւ զհարաւ[g]. *եւ Սողոմոն[18] ասէ.* Տէր արար զշէնս եւ զանշէնս եւ զեզրս բնա-

1 *V* զյՈվկիանոս *փխ* զՈվկիանոս *(վեր. Սուքրեանի ըստ բազմաթիւ այլոց)*

2 *VS* անգեան *փխ* անկեան *(վեր. ըստ այլոց, տե՛ս նախ. Գ.3, 31)*

3 *Ըստ Երեմեանի՝ ճիշտ է* յերկուց՝ *ըստ համաոստի*

4 *Համաոստում Բ գլխի վերնագիրը վրիպմամբ բերուած է այս նախադասութիւնից առաջ. թերեւս, նախագաղափարում այն եղել է աջ երեսի ձախ լուսանցքում եւ համաոստող խմբագրի կողմից վրիպմամբ վերագրուել է ձախ երեսի բնագրին (ուր* Քանզի*-ն էլ, միգուցէ, ունէր կարմրատառ գլխատառ). վերականգնումը՝ Երեմեանի (1972). այս դիտարկումը թոյլ է տալիս պատկերացնել համաոստի նախագաղափարի (գուցէ եւ՝ հէնց հեղինակային սկզբնօրինակ գրչագրի) էջի մեծութիւնը. հմմտ. ստորեւ, նախ. Բ.1-ի ծնթ.*

5 *S* Դիոնեսիոս *փխ* Դիոնէսիոս *(V)*

6 *V* Կոստ՝, *S* Կոստանդին *փխ* Կոստանդիանոս *(վեր. ըստ նախորդի, տե՛ս նախ. Ա.28)*

7 *V* ընգերս *փխ* [ընդ] ընկերս *(վեր. Սուքրեանի. տե՛ս բարբառային* **Կ → Գ** *եւ հմմտ.* **ընդ – ընգ...***)*

8 *V* Ժողովեսին *փխ* Ժողովեսցին *(վեր. Սուքրեանի ըստ բազմաթիւ այլոց)*

a **Հմմտ. Ծն. Ա** *9*

b **Ծն. Ա** *10*

9 *V-ի* Ի*-ն կարմիր գլխատառով է՝ պարբ-ն նշան, որից առաջ Երեմեանը վերակ-նում է ենթավերնագիր.* «Յաղագս երկրի բնակելոյ մարդկան»

10 *V* բարէխառնութեան *փխ* բարեխառնութեան *(վեր. Սուքրեանի. հմմտ. նախ. Ե.239)*

11 *V* չափից *փխ* չափ իցէ *(վեր. Սուքրեանի)*

c **Յոբ, Լ.** *18–19*

12 *S* որով թագեալ *փխ* որովք թագել *(V)*

13 *V* սոփաէրա մենեցոյ, *S* Սովփարայ Մինեցւոյ *փխ* Սոփա՛ռա[յ] Մինեց[ւ]ոյ *(վեր.՝ ըստ Յոբ, ԺԱ 1)*

d **Յոբ, ԺԱ** *9*

14 *V-ում* Ի*-ն գլխատառով է, կարմրով եւ կրկնակէտից յետոյ, որ պարբերութեան նշան է (ըստ ամենայնի՝ անտեղի)*

15 *S* բնակել *փխ* բնակիլ *(V)*

e **Հմմտ. Եսա. Խե** *18*

16 *V* զնայ *փխ* զնա *(վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց)*

f **Եսա. Խե** *18*

17 *V* Դաւթեա, *S* Դաւթեայ *փխ* Դաւթ՝ա[յ] *(վեր.)*

g **Սաղմ. ՎԸ(ՎԹ)** *12*

18 *VS* Սաղոմոն *փխ* Սողոմոն *(վեր. ըստ յաջորդի, տե՛ս նախ. Ե.237)*